Հավելված 1

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ -ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

<table>
<tr><td>Հ/Հ</td><td>Ձեռք բերվող ծառայության անվանումը</td><td>Տեխնիկական բնութագիրը**</td><td>Չ/մ</td></tr>
<tr><td>1</td><td>ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով 2017թ. առաքվող միջազգային բեռների մաքսային ձևակերպման միջնորդային ծառայություննների և մաքսային պահեստից ազգային պահեստ բեռների առաքման ծառայություններ</td><td>Համաձայն հավելված 1.1 1.Բեռի Մաքսային պահեստ մուտք գործելու պահից, դրա առաքումը ազգային պահեստ ոչ ուշ, քան.<br>ա.դեղերի և դեղորայքի, ինչպես նաև խիստ ջերմային ռեժիմով պահպանման ենթակա այլ ապրանքների համար, «սառցե շղթայի» (+2 - +8 Ցելսիուսի սանդղակով ջերմաստիճանի) պայմաններում՝ 24 ժամ (որից 8-ը աշխատանքային),<br>բ. Պահպանման խիստ ջերմային ռեժիմ չպահանջող ապրանքների դեպքում ՝ 48** ժամ (որից 16-ը աշխատանքային) ժամկետներում:<br>2.Ապրանքների ներմուծման մաքսային ռեժիմի փոփոխության ձևակերպում (ժամանակավոր ներմուծման ձևակերպման պահից առավելագույնը 90 օրացուցային օրվա ընթացքում)<br>3.Բեռների ներմուծման և արտահանման հետ կապված ՀՀ պետական կառավարման մարմինների հետ նամակագրման ապահովում, ներառյալ նամակների, դիմումների, նախագծերի պատրաստում, առաքում և այլ անհրաժեշտ գործողությունների կատարում :<br>4.Դեղերի ներմուծման հետ կապված ՀՀ օրենսդրությամբ սահմանված հավաստագրերի ստացում:</td><td rowspan="4">դրամ</td></tr>
<tr><td colspan="3">Ծառայության մատուցման ժամկետը</td></tr>
<tr><td colspan="2">Սկիզբը</td><td>Ավարտը</td></tr>
<tr><td colspan="2">Պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից</td><td>մինչև 31.12.2017թ.</td></tr>
</table>

* ժամանակի հաշվարկը սկսվում է Կատարողին ստացված բեռների մաքսային ձևակերպման համար ՀՀ օրենսդրությամբ պահանջվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրելու պահից:

** Մաքսային ծածկագիր ստանալու նպատակով ՀՀ լիազոր մարմին դիմելու պահից մինչև նշված ծածկագրի տրամադրման պահը ժամանակահատված չի հաշվարկվում: